

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

«03» հունիսի 2026թ.

N 11 - Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՓԻ-ԷՅՋ-ՓԻ ՓԱՐԹՆԸՐՁ» ՓԲԸ-Ի ԲՈՂՈՔԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհուրդը՝ քննության առնելով «ՓԻ-Էյջ-ՓԻ Փարթնըրզ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) կողմից 2026 թվականի ապրիլի 18-ին ներկայացված բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) խորհրդի կողմից 26.03.2026 թվականին կայացված որոշմամբ «ՓԻ-Էյջ-ՓԻ Փարթնըրզ» փակ բաժնետիրական ընկերությանը (ՀԳԳՀ 1 20 0202) 2025 թվականի հոկտեմբերի 3-ի որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման արդյունքում տրվել է 3 «երեք» գնահատական և որպես կարգապահական պատասխանատվության միջոց սահմանվել է 500. 000 ՀՀ դրամ տուգանք:

Նշված որոշումը 2026 թվականի ապրիլի 18-ին Կազմակերպությունը բողոքարկել է Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհրդին (այսուհետ՝ Խորհուրդ):

Կազմակերպության կողմից ներկայացված բողոքում նշված է, որ 2025 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին Կազմակերպությունում իրականացվել է աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահպանման արտաքին գնահատում՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2022 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 420-Ն հրամանով (այսուհետ՝ Հրաման) հաստատված աուդիտորական ծառայությունների որակի հսկողության

պահանջների պահպանման արտաքին գնահատման ընթացակարգերին համապատասխան: Գնահատման արդյունքում գնահատող խմբի կողմից արձանագրվել են 11 բացահայտումներ, որոնցից 4-ը գնահատվել են որպես «որոշակիորեն նշանակալի», 7-ը՝ «նշանակալի»: Հետագայում Պալատի Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի վերանայման արդյունքում «որոշակիորեն նշանակալի» և «նշանակալի» բացահայտումների քանակները փոխվել են՝ 6 «որոշակիորեն նշանակալի» և 5 «նշանակալի» բացահայտումներ:

Վերը նշվածի արդյունքում Պալատի խորհրդի որոշմամբ՝ Կազմակերպության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ տուգանք 500.000 դրամի չափով:

Բողոքաբերը բողոքարկել է «նշանակալի» գնահատված թվով երեք բացահայտումների առկայությունը, և «նշանակալի» գնահատված թվով մեկ բացահայտման մասով՝ բողոքարկել է բացահայտման տեսակը:

Դիտարկում 1. Ստացված կանխավճարների ֆինանսական բաղադրիչի վերաբերյալ բացահայտում,

Դիտարկում 2. Բնակարանների ուշացման վերաբերյալ,

Դիտարկում 3. «Կարծիքից հրաժարում» կարծիքի վերաբերյալ,

Դիտարկում 4. Հաշվապահական գրանցումների վերաբերյալ:

Վերը նշված բոլոր բացահայտումները Կազմակերպության արտաքին գնահատման հաշվետվության մեջ դասակարգվել են որպես «նշանակալի» բացահայտումներ:

Հաշվի առնելով նշված դիտարկումներից յուրաքանչյուրի մասով բերված փաստարկները՝ բողոքաբերը խնդրել է անվավեր ճանաչել Պալատի խորհրդի 2026 թվականի մարտի 26-ի՝ ««Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության անդամ «Փի-Էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ աուդիտորական կազմակերպության նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոց կիրառելու մասին» թիվ 20-Ա որոշումը:

2. Բողոքին վերաբերող քննության ընթացքը և եզրահանգումները

Բողոքը քննելու համար Խորհուրդը գումարել է 3 նիստ՝ 2026 թվականի մայիսի 12-ին, 20-ին և հունիսի 3-ին, որոնց ընթացքում լսել է ինչպես բողոքաբերին, այնպես էլ Կազմակերպությունում Հրամանով հաստատված ընթացակարգերին համապատասխան որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատում իրականացրած վերահսկողներին: Խորհուրդը նաև դիմել է Պալատին՝ ստանալու տեղեկատվություն՝ Պալատի խորհրդի նիստում Կազմակերպության արտաքին գնահատման հաշվետվության քննարկման ընթացքում Կազմակերպության կողմից բողոքարկվող բացահայտումների մասով Պալատի խորհրդի յուրաքանչյուր անդամի քվեարկության արդյունքների, ինչպես նաև քվեարկության համար հիմք հանդիսացած եզրակացությունների հիմքերի վերաբերյալ:

Բողոքի քննության արդյունքում Խորհուրդը հանգել է այն եզրակացության, որ բողոքաբերի կողմից ներկայացված 3-րդ և 4-րդ դիտարկումների մասով արձանագրված բացահայտումները վերահսկողների կողմից դասակարգվել են որպես «նշանակալի», սակայն

դա չի համապատասխանում Հրամանով հաստատված ընթացակարգերի գնահատման և պատասխանատվության միջոցների կիրառման սխեմային:

Խորհուրդը գտնում է, որ թեև արձանագրված հանգամանքները վկայում են խախտումների առկայության մասին, սակայն դրանք չեն համապատասխանում «նշանակալի» գնահատման չափանիշներին և ենթակա են գնահատման որպես «որոշակիորեն նշանակալի»:

Միաժամանակ Խորհուրդը փաստում է, որ գնահատման փոփոխությունը կհանգեցի դրանց համար կիրառման ենթակա կարգապահական պատասխանատվության միջոցի վերանայման անհրաժեշտության:


3. Եզրափակիչ մաս

Ելնելով քննության արդյունքներից և հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասը և 31-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհուրդը՝

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «Փի-Էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ-ի 2026 թվականի ապրիլի 18-ի բողոքը բավարարել:
2. Անվավեր ճանաչել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության խորհրդի 2026 թվականի մարտի 26-ի՝ ««Փի-Էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ աուդիտորական կազմակերպության նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոց կիրառելու մասին» թիվ 20-Ա որոշումը:
3. «Փի-Էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ-ի 2025 թվականի հոկտեմբերի 3-ի աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահպանման արտաքին գնահատման հաշվետվությունն ուղարկել Պալատի խորհուրդ՝ նոր քննության:

 Recoverable Signature


X
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՐԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿՈՒԹՅԱՆ խորհուրդ
eD

Signed by: POGHOSYAN ARMAN 3809820482

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ